ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1505-Ա « 20 » մարտի 2026 թ.

ԵՐԵՎԱՆ, ԱՐԱԲԿԻՐ, ԼԵՌ ԿԱՄՍԱՐԻ ՓՈՂՈՑ Հ.15/5 ՀԱՍՑԵՈՒՄ՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՄԱՆ ՍԱՄՎԵԼԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի հ.912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ, 11-րդ և 17-րդ կետերով, հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2010 թվականի նոյեմբերի 12-ի հ.5299-Ա որոշումը, կառույցը քաղաքացիական օրենսգրքի 188–րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանելու վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից 27.02.2026թ. տրված մասնագիտական եզրակացությունը, հաշվի առնելով ինքնակամ կառույցների արտաքին չափերի մասին «Տիգրան Լևոնյան» Ա/Ձ-ի կողմից 20.09.2024թ. տրված եզրակացությունը, ընդհանուր համատեղ սեփականատեր Հայկ Կիրակոսյանի կողմից 05.06.2023թ. տրված գրավոր համաձայնությունը, ինչպես նաև հաշվի առնելով կառույցն իրականացրած անձի դիմումները (28.10.2022թ. հ.Դ-97491-22, 22.02.2023թ. հ.Դ-22402-23, 05.06.2023թ. հ.Դ-66283-23, 23.06.2023թ. հ.Դ-75202-23, 13.11.2023թ. հ.Դ-140798-23, 22.10.2024թ. հ.Դ-134553-24, 09.12.2024թ. հ.Դ-156342-24, 07.01.2025թ. հ.Դ-690-25).

1. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. փետրվարի 2-ի հ.88 որոշման հ.1 հավելվածի 7-րդ կետը, Երևան, Արաբկիր վարչական շրջանի Լեռ Կամսար փողոց հ.15/5 հասցեում գտնվող 37.3 քառ.մետր ընդհանուր մակերեսով շինություններն, առանց ճարտարապետահատակագծային առաջադրանքի և նախագծային փոփոխությունների, ընդգրկել ոչ բնակելի ֆոնդում՝ որպես հասարակական, «ՀՀՇՆ 30-01-2014» պահանջներին չհակասելու պայմանով:

2. Երևան, Արաբկիր, Լեռ Կամսարի փողոց հ.15/5 հասցեում՝ ընդհանուր համատեղ սեփականություն (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 10.06.2013թ. հ.10062013-01-0226 վկայական, ՀՀ կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր հ.2022YBAG3P) հանդիսացող հողամասում քաղաքացի Արման Սամվելի Կիրակոսյանի կողմից ինքնակամ իրականացված 13.0 քառ.մետր ընդհանուր մակերեսով կառույցը (բնակելի (աստիճանավանդակ)՝ 8.28 քառ.մետր, հասարակական շինություն՝ 4.72 քառ.մետր) ճանաչել օրինական:

3.Հանձնարարել Երևանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարին՝ Երևանի Արաբկիր վարչական շրջանի Լեռ Կամսար փողոց հ.15/5 հասցեում գտնվող 37.3 քառ.մետր ընդհանուր մակերեսով շինությունները հաշվառել որպես հասարակական նշանակության:

4. Ընդունել ի գիտություն, որ.

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5. Սահմանել, որ կառույցն իրականացրած անձը.

1) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Երևան քաղաքի բյուջեի N900015211247 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի հ.912-Ն որոշմամբ հաշվարկված 128027 (մեկ հարյուր քսանութ հազար քսանյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը,

2) իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը,

3) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

6. Սույն որոշումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

7. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

8. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

9.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ